ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտխորհրդի՝
04. 11.2024թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1.ԵԼՀ ֆակուլտետի Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում 2025-2026 ուսումնական տարում առկա ուսուցման ձևով ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Գոհար Աշոտի Հարությունյանի** հետազոտության ընդհանուր թեմայի և ղեկավարի նախնական հաստատման հարցը:
2.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում Ժ.02.07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ 2025-2026 ուսումնական տարում առկա ուսուցման ձևով ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած ֆակուլտետի «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Գոհար Աշոտի Հարությունյանի** հետազոտության ընդհանուր թեմայի և ղեկավարի նախնական հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ.Պարոնյանը ներկայացրեց հարցը՝ նշելով, որ արդեն ընտրվել է հետազոտության թեմայի վերնագիրը՝ «**Հասարակական կարծրատիպերի լեզվական և արտալեզվական առկայացումը գլոբալ և լոկալ գովազդներում**»: Աշխատանքը նպատակ ունի ձևավորելու մի քանի հատվող կարծրատիպերի համապարփակ նկարագիր՝ ընդգծելով, թե ինչպես են ներկայացվում տարբեր հասարակական ինքնություններ: Ուսումնասիրության նորույթը գլոբալ և լոկալ գովազդային ռազմավարությունների զուգադրական վերլուծությունն է: Թեման արդիական է, քանի որ գովազդը մնում է սոցիալական ընկալումների ձևավորման ամենաազդեցիկ գործիքներից մեկը: Այն թելադրում է, թե ինչպես կարելի է ներկայանալ կամ պատասխանել ինքնությանը վերաբերող հարցերին: Գովազդում տարիքի, սեռի, էթնիկ պատկանելիության և ռասայի վրա հիմնված կարծրատիպերի առկայությունը և դրանց լայն կիրառումը նպաստում են «կարծրատիպային մտածողության» տարածմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ԵԼՀ ֆակուլտետի Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում 2025-2026 ուսումնական տարում առկա ուսուցման ձևով ասպիրանտուրայի անվճար համակարգ ընդունվելու նպատակով հայտ ներկայացրած «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող **Գոհար Աշոտի Հարությունյանի** հետազոտության ընդհանուր թեման՝«**Հասարակական կարծրատիպերի լեզվական և արտալեզվական առկայացումը գլոբալ և լոկալ գովազդներում**»: Նախնական գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Նարինե Լևոնի Հարությունյան: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան
04.11.2024թ .